


ն. Ամենապատուութիւնն յաջորդ օրը այցելեց նաև Բարձր. Մեծ. Եպարքոսին և Գառաւիտի նախարարին, որմէ յետոյ սկսուեալ երթալ պատրիարքարան՝ ըստ սովորութեան:

— Տարթ. Աւետիքեանցի ուսուցչապետը՝ որ Աւելի և ուրիշ նահանգներու մէջ գիտնական խաղաղութիւններ կատարած է, Կովկասի ճամբով Պոլիս եկած ըլլալով՝ այցելութիւն տուաւ Ս. Պատրիարք Հօր իր բնակարանին մէջ:



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

ՈՒՂԵՂԻ ԵՐԿՐԱԿԱՆ ԽՈՐՀԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀԱՆՈՒԹՅԱՆ

Սեպտեմբերի 1-ի համարով «Բիւզանդիստ» թերթի եւանգելիստը յիշեցնում է, թէ սկսած է դպրոցական նոր տարին և թէ պէտք է զգուշանալ հին վտանգներից, որոնց մէջ առաջինն է ուղեղի յոգնութիւնը: Տգիտութեան դոհեր պիտի պահասին, էլ անկախութիւններ չպէտք է գործունէ և տառապած սրտերը դառնանան, եթէ դատարարը գիտենայ որոշել, թէ ինչն է առաջնութեամբ աշակերտներից մէկի գրգռութիւնը մեռի ծուլութիւնը, երրորդի ստախոսութիւնը, չորրորդի անհասկանալիութիւնը և այլն: Եւ որքան պատիժներ իրանց վնասակար ձևը պիտի փոխեն: Գառ չգիտենալու համար արուեստը պատիժներ, քննութեանց մէջ ձախողներ՝ որքան պիտի նուաղին, եթէ ժամանակացոյցը յարմար կերպով պատրաստուի, եթէ քննիչն ի նկատի առնէ քննուողի ուղիղ յոգնութեան առաւելումը:

Յազուածակիրն այսպէս համակերպի կերպով խրատում է իւր պաշտօնակիցներին, հրաւիրելով, որ իրանց կազմական կանոնադրի տրամադրութեանց համեմատ վարուին:

Մենք, ուստահայեք, ի հարկէ տաճկահայերի հանգամանքների ծանոթութիւն չունենք: Բայց այս անգի ուսուցիչը ոչ մի հմտութեամբ աշակերտի յոգնութեան աստիճանը չափելու, և ոչ մի կանոնադրի նորան չի կարողանալ խելիք ընել, եթէ դատարարակերտ հոգի չունի, Կարելի է, թէ հնարու որ է խրատներով տաճկահայերի

դէմ զգացմունքը շարժել, իսկ մենք, ուստահայեր, որոնք կողմից ժողովուրդ ենք, մեր սրտի լարերը դիւրաւ չեն լարվում, մեր պինդ գլուխները հեշտ կերպով չեն կաշկանդուում:

Ուղեղի յոգնութեան խնդիրը մերոնց էլ անծանօթ բան չէ, և ո՞ր նորաձեւութեան խնդիր անցյալ է մնում մեզ: Բայց այս դէպքում էլ շփոթում ենք իրերը և մի անուամբ նշանակում ենք այլևայլ բաներ: Զոր օր, յոգնածագիրն ուղեղի յոգնութեան փորձերի կարգադրութիւնները յիշատակելով, ի թիւս այսոյ ասում է, թէ աշակերտի շարաթահան աշխատութեան ամենալաւ օրերն են կերակնօրեայ հանգստութիւնից յետոյ առաջին երկու օրերը, ինչպէս որ օրուայ մէջ աշխատութեան լաւագոյն ժամերն են՝ դասերի առաջին երկու ժամը, Մինչդեռ եթէ մեր դպրոցների աշակերտական մասնանները քննենք, էլ հանգիստներ այն դարմանալի իրողութեան, թէ մեր աշակերտները աւելի ծուլանում և աւելի անբարար թուանշաններ են ստանում—հէնց հանգստութեան հետեւալ օրը, այսինքն երկուշաբթի օրը: Միթէ նոցա ուղեղը աւելի յոգնած է երկուշաբթի օրը, քան ուրիշ օրերը:

Մեզ միտքաբերու համար կարող էնք աւելացնել, որ ուղեղի յոգնութեան խնդիրն իւր յատուկ պատմութիւնն ունի, և թէ շփոթութեանց դուռը թերեւս ուրիշ անգ պէտք է փնտռուի: Ուղեղի յոգնութեան խնդիրը բուն դերմանական ծննդով է առաջ եկել, որ մանաւանդ 10 տարի առաջ աւելի ընդարձակութիւն ստացաւ և ամէն երկիրներում խօսակցութեան ու քննութեան նիւթ դարձաւ, երբ որ գերմանական կայսրն էլ իւր յատուկ եռանդով յուզումն աւելի սաստկացրեց, Արդեօք արդի ուսումնարանի աշակերտներին լափից աւելի աշխատեցնում է, — ահա իսկական խնդիրն այդ է: Բայց շատ սխալ կը լինի կարծել, իբր թէ ծանրաբեռնութեան խնդիրը վերջին տասնեակ տարուայ խնդիր է: Կարելի է ասել, թէ 1836 թուին «Բերլինի բժշկական ամսագիրը» օրախարդի մէջ հանդէս հանեց այդ խնդիրը՝ «Գրգռողներում առողջութեան պաշտպանութիւնը, յոգնածութիւն, որ մեծ ազդուի հանեց: Բսկոյն ամէն կողմից բնականաբանութեան դուռը ելան, ամէնքն սկսեցին վիճարանել, մոռացուեցան ուրիշ հիւթական խնդիրները, մինչև որ լուսաւորութեան նախարարը հրաման ստացաւ արտունջները լաւ քննել: Հետեւեալն այն եղաւ, որ դանդաւանքն ընդհանրապէս անհիմն համարուեցան, և միայն փոքր անպատահութիւնները վերացնելու համար՝ առաջարկուեցան մի քանի խորհուրդներ: Մի առ ժամանակ հասարակական կարծիքը խաղաղուեցաւ: 1854-ին, 1860-ին, 1884-ին պայքարը հեղաշեւտեալ աւելի սաստկացաւ, ամսագիրը

ներ, օրաթերթեր, ժողովներ ձայն հանեցին, կուսակցութիւններ կազմուեցան, և այսքան տաք վեճերից վերջիվերջոյ այն երեւցաւ, որ հասարակականները մեծ կշիռ չունէին, և թէ ասիական տնտեսական և քաղաքական անհերքելի ապացոյցներով հաստատել, թէ ուսումնարանը ծանրաբեռնուած է: Աւստի սկսեցին կազմակերպել կերպով լուսարանէլ ծանրաբեռնութեան խնդիրը, զոր օր. զինուորական վիճակագրութեամբ թէ կամուորների մէջ քանիսը անչարմար են հանդիսանում, կամ ինքնապաշտ և խելագարուող աշակերտների թիւով և ուրիշ հանգամանքներով: Այս քանիքով էլ չտուգուեցաւ միտած ծանրաբեռնութիւնը: Միայն մի բան անհերքելի կերպով հաստատուեցաւ, այն է թէ դասարանների բարձրութեան հետ ի միասին՝ արագ արագ սոստահանում է աշակերտների կարճատեսութիւնը:

Բայց այս քանիքով հասարակական կարծիքը չհանգարուեցաւ: Ծանրաբեռնութեան մասին շարունակեցին վիճարանել աւելի եռանդով և զրգումամբ: Այսքան արատւնջներից յետոյ, 1890 թ. ժողով դուրսարուեցաւ դանազան վիճակի մարդկանցից, որ դպրոցական նորոգ. կազմակերպութեան հետ վերջ պէտք է դնէր նաև ծանրաբեռնութեան խնդրին. ահա այս անգամ ըստման ճառը կարգաց ինքը կայորր: Այս անգամ ևս խոստովանեցին, թէ ծանրաբեռնութեան մասին հաստատ ապացոյցներ գեւ ևս չկան, բայց և այնպէս իրողութիւնը պարզապէս արդէն իրեն ապացուցած համարելով, կ'ընտելեցին ծրագրի պահանջները՝ դասերի թիւը և առաւելին պարագամները՝ զգալի չափով: Այնուհետև թէպէտ դանդաղեցրը շատ պակասեցին, բայց բժիշկները գեւ էլի դժ չեն մնում եղածից և շարունակում են պահանջել ուսման աւելի պարզութիւն:—

Ինչո՞ւ համար այս կարճ պատմութիւնը հարգեցիք: Հարեաւ ոչ այն նպատակով, որ ապացուցանուի իրը թէ ուսումնարաններում ուղեղի յոգնութիւն բնաւ չի պատահում: Ընդհակառակ, ուր որ դորժը բազմաթիւ անձինքների դորժակցութեան վերայ է հիմնուած, իսկ այն անգ շատերը իւրեանց անճամտութիւնից, տկարութիւնից կամ աղիւսութիւնից ակամայ մեղանշում են ընդհանուր համեքաշխութեան գէժ, անշուշտ ուղեղի յոգնութիւն պիտի յառաջացնեն, որից որ դեռ չի եղել նաև գերմանական ուսումնարաններ, որ երկուս չի կրել աշակերտներին լուաշխատելու սովորեցնել: Բայց գերմանական ուսումնարանը կարող է պարճենալ այն բանով, որ ստացի մեղքը յախուռն կերպով չի բարդել ուսումնարանի վերայ, որ ուղեղի յոգնութիւնը համարել է ոչ թէ ծրագրի ծանրութեան հե-

տեանք, այլ անփոյր դաստոտութեամ պտու: Այսպիսի ինքնաճանաչութեամբ դաստոտութիւնը վերջիվերջոյ այն ստիճան կատարելութեան հասաւ, որ հէնց այդ հանգամանքը աւելի նախանձելի պիտի դառնայ ուրիշ ազգերի համար, քան թէ գերմանական ծրագրեր, որ արդարեւ այլ ևս չի զիմանում արդի ժամանակի պահանջների առաջ: Բայց այս խնդիրը յօդուածիս շրջանից դուրս է:

Արդ յայտնի է, որ ոչ մի ազգի ուսումնարանն այնչափ ծանր պահանջներ չի բարդում աշակերտի վերայ, քան գերմանական ուսումնարանը: Բայց մենք անսանք, որ հէնց այդ անգ պնդում են, թէ աշխատութեան ծանրաբեռնութիւն կամ ուղեղի յոգնութիւն չկայ: Եթէ այս այսպէս է, հապա ծիծաղելի բան չէ՞ ուղեղի յոգնութիւն վնասել մեր ուսումնարաններում, ուր որ պահանջները շատ և շատ համեքառանք են: Ժամանակ է, որ մեր ձախորդութիւնների իսկական պատճառն իմանանք և մեր անշուրհութիւնը ծածկելու համար՝ մտացածին պատճառներով չհանդստանանք:

Այն է մեր ցաւը, արդեօք ուղեղի յոգնութիւնը թէ ուղիղի պարագայութիւն, արդեօք մեր աշակերտների միտքը տարիներ շարունակ այնքան «լցնում» ենք, որ վերջիվերջոյ ծանրութեան տակ ճնշվում, պարտաւում է: Թէ այնքան դատարկ ենք թողնում, որ աշակերտներն այդ բանն զգալով, միշտ նախանձով են նայել ուրիշ ուսումնարաններ վերայ, ուղում են շարունակ ուսանել և ուսանել, ուսման մէջ պառտել և երբէք քաջութիւն չեն ստանում վերջ գնել իրանց աշակերտութեան...:

Մենք պէտք է մի օրինակով հասկանանք գերմանական ուսումնարանների ձգտումը, որ արդիւնաւոր դառնայ իւրեանց գործը, որպէս զի ի հակառակէն ըմբռնելի դառնայ, թէ ինչ է նշանակում ուղեղը շարունակ տարիներ անդործ պահել պարագութեան մէջ:

Մեղ պէս այն անգ զգում են, թէ «Հաս ծանօթութիւն Գիշ ժամանակում» աւանդելու սովորվում են, բայց այն անգ աճէն կերպ աշխատում են խելայի կերպով անհանգ ժամանակը: Այն անգ ոչ մի ուսմանք անկախ չի մնում, այլ իւրաքանչիւրը բոլորին օժանդակում է և բոլորից օժանդակութիւն է ստանում: Այս բանն աւելի լաւ է երևում աշակերտների գրած շարագրութիւններում: Զոր օր. ինչպէս է օգտվում մայրենի լեզուն յունարէնի դասերից: Մի ամբողջ դանձարան, մի անոպառ ծով է դառնում յունարէնը մայրենի լեզուի շարագրութեանց համար: Ինչ որ յունարէն կարգացվում է, այն հազար եղանակով բեղմնաւորվում է շարագրութիւնն:

ի մէջ: Մենք չառ պիտի դժուարանանք այս վերջ յօդուածում ցոյց տալ այդ երկու շրջաններէ բոլոր փոխադարձ յարակցութիւնները. գոհ լինելով, թէ՛ դէժ գլխաւոր երակներն երևան, որով մէկը միւսից անունդ է առնում և աճում ու կազմութիւնը է:

Այդ բանն համար քննարկ առաջնորդութիւններ կան. մենք կը հետեւենք Dr. Laas-ի Der deutsche Aufsatz-ին:

Նախ և առաջ աշակերտին արժուած է ամենհասարակ բնաբան, որ մեզ էլ ծանօթ բան է. այն է Հոմերոսի որ և է գլուխ կարգալ տալուց յետոյ, աշակերտին դրել են տալիս բնութեւրդի համառօտ բովանդակութիւնը մայրենի բնութիւնը և շնորհալի կարգաբանութեամբ, զոր օր. Տեքմաքի Պիլիքի մէջ. Տեքմաքի Սպարապի մէջ. ինչ և պատմում Հոմերոսը կիկլոպներէ մասին. Ողիսևսը կիկլոպի մօտ. Կալիստի մօտ. դոնիսի մէջ. նա ծովի ալիքներէն փրկուած է Թեակեան կղզում. առաջին օր Ալիքի մօտ մէջ. քեակացոց զինուորական խաղեր. Ողիսևսը եւմաոսի մօտ և այլն: Այսպիսի հասարակ շարադրութիւններում աշակերտն առաւելապէս այն ընդունակութիւնը պէտք է ցոյց տայ, թէ կարողանում է անէականը դատել և էականը շեշտել: Աւելի խելամառութիւն կը պահանջեն հետեւող շարադրութիւնները, որ զեռ գարծեալ զերկներէ կարգելն են. Իրակայի վիճակը նախ քան Ողիսևսի Տրոյադա երաշխ. Պիլիքի և Սպարապի հանգամանքները հակադրութեամբ Իրակայի հանգամանքներին. Իրակայի վիճակը Ողիսևսի դարձից փոքր ինչ առաջ հանգամանքներ անառակութիւններն ընդհանրացնել. Անիմոնու. երկամաս. ծանաւները՝ եւմաոս. Միլեթոս. երկիւրեւ. երկուն. Ողիսևսի գալուստը Իրակա. Ողիսևս և Տեքմաք եւմաոսի մօտ. ողիսևսի դասաւորութիւնն ըստ բովանդակութեան. առաջին լուս գլխի յարաբերութիւնն առ ամբողջութիւն. ինչ ճարակոյն և ծնում ողիսևսի վերջարանը վաւերականութեան ծեւակից. Ողիսևսի վայելած Ողիսևսի նախախնամութիւնը (Աթէնասի առաջնորդութիւնը Ողիսևսին, Տեքմաքի և Պենելոպի մասին հոգացողութիւնը Պոլիդոնի բարկութիւնը, անոր պատճառն, արդիւնքը, նոյնպէս և հակառակ կողմի հակադրեցութիւնները). Ողիսևսի ծովային ալիքներէ մեկը. Պենելոպի որպէս ամուսին. որպէս մայր, համակերպի դէմ. ինչ նպատակով քանակապէս թաղիցս յիշատակում է կիկլոպներէ և Ռեւոսի կիկլոպ. ողիսևսի ընտանեկան կիսերը, կամ աւելի սահմանափակութեամբ՝ Քեակացոց կամ Իրակայի ընտանեկան կիսերը: Այս շարադրութիւնները գլխաւոր նպատակն է գրել ցել ու ցան նիւթը պարտ ու պատշաճ կերպով հաւաքել, վերնադրել կատարել պատասխանը տալու համար, ուրեմն կարգադրած ուշի ուշով և հիմնաւորապէս ըմբռնել:

Տեղի սղութեան պատճառով, այստեղ նշանակում ենք միայն բնաբանները, միայն վերնադրերը, աւելի կարենք է բանաստեղծութիւնից այն նիւթի ծաղկափայլ, որով այնուհետեւ աշակերտի շարադրութիւնը պիտի ձևանայ: Աշակերտը պէտք է սովորէ կարեն որ առաջ հաւաքեն, հաւաքածն էլ լիակատար պիտի լինի, այնպէս որ գրելից ոչ մի բան գուրտ չթողնէ, ինչ որ բնաբանի հետ յարակցութիւն կարող է ունենալ: Այս գլխաւոր գործը կատարելուց յետոյ, շարադրութեան գաղափարութեան և լեզուի մասին պէտք է հոգալ: Թեթեւ ախարկներով ծաղկափայլ օրինակը տեսնենք: Ասենք, թէ պահանջում է, որ նկարագրուի Ալիքի քարի յայտարար նշանները: Արդ յորում է նորա էութեան կիկլոպ ու դրոշմը, հոգին ու մարմինը, նորա անձով ներկայանում է յունաց հին հերոսութեան ժամանակի երկտառար գերեզմանի կատարելութիւնը, մանաւանդ գերմարդկային զօրութիւնը, վասն զի նա առաւելածնի զարմնից է: Իւր աղագական Այսան ևս վերջ ինչ մասն ունի այդպիսի գերբնականութիւնից. սակայն Ալիքի նորա պէս ոչ միայն հեռաւոր շառաւիղով ծագում է Ջեւից, այլ և ուղղակի հարադաս ծնունդ է Թեակի: Իւր այսպիսի տոմարութիւնից, արիւնից և հասակից պէտք է ըստարեւելի գառնան նորա յատկութիւնները, խօսքերն ու գործքերը, մինչև անգամ յարակից հանգամանքները. և ինքը կը հանդիսանայ աւելի որպէս խաղ, քան որպէս անհասկանալի: — Մարմնական գեղեցկութիւնը. նորա ձայնը, վազքը, բազում կները. Պրիամոսի հիացումը. հերոսութեան խօսքն ու յարմար շնորհակցութիւնը, նորա երկմարդ խօսելու շնորհով օժտած, — Զրաշալի են նորա գործերը. և այս հանգամանքից է ծագում իւր ինքնամայն հայտնարիւրը, որ առհասարակ երկտառար գութեան յատկութիւն է. բայց նորա մէջ երկտառարդի խոշոր գծերը անհեթեթ կերպով են յայտնվում: Նա անդուստ և բուռն է իւր ամենայն զգացումով — նորա փառամոլութիւնը, բարեկամասիրութիւնը, վերջը, կատարութիւնը, ատելութիւնը, քէնը. նորա մեծահոգութիւնն էլ մի և նոյն աղբիւրից է ծագում. խորհրդեան մէջ նորա յաղթում են ուրիշները (Ողիսևս. Նեստոր). շատ խրատական է առիժն նմանութիւնը: Ի՞նչպէս է երևում նորա մէջ անձնատելութիւնը, Աստուծոյ երկիւղը, կամակորութիւնը, հաստութիւնը, անողորմութիւնը, վայրագութիւնը (Հեկտորին ուղում է հում հում ուտել), անգթութիւնը, պատկառանքը (հօր, մօր և Նեստորի ու Պրիամոսի պէս ծերերի դէմ): — Նախապատմութիւն, մանկութեան ժամանակ Թեակի ձեռքով սնուած. Փոյնիքս. Բէլլոն. ինչ սովորեց այս բուսուցիչներէ: Պատրուկէս. Ողիսևս և Նեստոր

Փթիկայի մէջ. Պէշկոսի պատուէրը. տախան խեղատ տղայամիտ. Փոյնիքոսի կարգաւիւրը նորան աւելի կըթելու համար. պատերազմի պատրաստութիւն. այդ բանից առաջ կատարուած գործքերը. Ազամեմանից խառկիւր. պատդամաութեան մերժումը. Պատրոկէոսի առաքումը. նորա գիտիկի կշան. Հեկատրի հետ մարտնչելը. նորա գիտիկի կշան. Պրիմամոսի հանդէպ. իւր մահը:

Նոյն օրինակ համագործութիւններ. Ազամեման. Այսիսիս ըստ իշխանի. Այսա Տէրմանացի. Հոմերոսը որին աւելի բարձր է գասում—Այսիսիսին թէ Այսիսին և այլն: Այսա—Տրոյապոլի աշխարհագրութիւն. Ջուսի գործունէութիւնը. ըստ իշխանի. հեղինակերի և երգչացիների սգոյցին առանձնաշարքութիւնը միմեանց համեմատութեամբ:

Աւելի բարդ են երկու վիպասանութեան վերայ հիմնած բնաբանները. դոր օր. Հոմերոսն աստուածներ: Ահա այդ վերնագրի ծաղկաբաղ ցանկը. մարդկական նմանութեամբ են մտածելի մարդկանց մարմնով. բայց աւելի խոշոր. աւելի ուժով (ձայն). մտածը պարզամիտ. մինչև անգամ դուարձուի. չափազանցութիւնը. ամենայն ինչ տեղի է տալիս Պոսիդոնի բոցեղէն օրի առաջ. աւելի ստատիկացած. սուր տեսողութիւն. բայց դարձեալ աչք ունին և միայն մի ուղղութեամբ են տեսնում. լսողութիւն. աւելի գեղեցիկ են. բայց Հեփեստոսից. կարողութիւն և դորութիւն. բայց Աստղիկի անձեռնհասութիւն. իշխանութիւն բնութեան վերայ—Հողմ. շանթ. տրեան անձրև. գիշերն երկաթացնելու. ցիւրկը կարճեցնելու ոյժ. գիւթութիւն — Հերմէսի դաւադան. Աթէնասի օտարաւոր. Պերկէի բմպէլի. Հերմէսի գեղթաւ. աստուածների աշխակերպութիւն և փոխակերպութեան ոյժ. բար դարձնելու. կարողութիւն. Ագիտոնի ծերի կերպարանը տալը. աստուածներից մէկի կշան մարդու մէջ ուժի աւելանալը—Արիւլէո. Ագիտոն և այլն. աստուածները խաւարեցնում և պաշտապնում են մարդու ու չքը. անմահութիւն. բայց կերակրի կարօտ—նեկատու. ամբարտա. ասանց ներդարձութիւնը Պատրոկէոսի և Արիւլէոսի վերայ. աստուածների ձիերն էլ ճարակ ոլորի ունենան. աստուածները վերադարձնել են. ցուն կրում. բնելու պէտք ունին. տարածութեան մէջ շարժում են. ամենուրեք չեն. արագ են (Հերմէսի կոշիկներ). հետուից ազդում են. բայց ոչ աստուծան հետաւորութիւնից. ուրեմն իրանը պէտք է հասնեն կամ պատգամաւոր ուզարկեն. ոչ ամենակարողութեան նշաններ. գիտեն ամենայն ինչ. ապագան (Պրոսպէո. Պերկէ. Թեախ). բայց այս էլ չափաւորած է—արդէն աչքը ամէն ուղղութեամբ չի տեսնում. Արեւը չգիտէ իւր օրդու մահը. Զեւը չգիտէ թէ Հերան ինչպէս

և ինչու է եկել իւր մօտ. Պոսիդոնը գործում է ընդդէմ նորա. առանց նորա գիտութեան. Իրիսը թաղուն առաքելում է Արիւլէո մօտ և այլն (Հիւլէնն ասել է. Վոյ նորան. ով որ ճշմարտութեան հասնել է ուղում մեղանչելով). Սաստիկացած կրքեր և զգացումներ—առելութիւն (Պոսիդոնի). ուրախութիւն (Զեւի). բարկութիւն (Զեւի). տրամբութիւն (Արեւի. Թեախի). հեշտասիրութիւն (Արեւ. Աստղիկ. Զեւ). առհասարակ անշարիտութիւն. նոցա շողորորթութիւնը. նախանձը. ստախոսութիւնը. այս տեղ էլ խոտաւոր ապահով է երգմամբ. բայց և տեղ տեղ ամօթխածութիւն. մաքուր մաերմութիւն:

Ինչպարանութեան մասնաւոր խնդիրներ. ինչպիսի են երևում աստուածները մարդկանց. աստուածների բնասնկան կեանքը. Ջուս. աստուծային բնասնկի զոյխ. երկնեան (դոմիսի կառայի դիցունիներ). Հոմերոսի գաղափարը հանդիմանող կենաց մասին:

Դառնալը դարձեալ երկրաւոր կեանքին. հոմերոսն իշխաններ (ժողում. վերադիրներ). իշխանական նշաններ. մարմնական և հոգեկան յատկութիւններ. գործք. պատիւ. ծերութեան հասակ ըստ Հոմերի. հոմերոսն զիցազներ խնձոյ. եօթ օրերը երկու թէ երեք անգամ են կրակովում. լուսնու մեծ. երաժշտութիւն. երգ. պար. հոմերոսն ժամանակի մանկավարժութիւն. կանանց վիճակը. կրքութիւնը. պարագմանքը. հազուսն ու զարդարակր ըստ Հոմերի—

Այս ամէն բնաբանները շատից քիչ է. ինչ որ դեռ միայն Հոմերի վիպասանութիւնները կարելի է հանել: Բայց աշակերտները կարգում են նաեւ յունաց օղբերգութիւնները. Պղատոնի և Արիստոտելի երկերը. լատիներէն լեզուով ենեականը և վերջապէս մայրենի գրականութիւնից բազմաթիւ սակզմագործութիւններ. որոնք այս կամ այն կողմից առնչութիւններ ունին Հոմերոսի հետ և կարող են աւելի ևս ճոխացնել և ընդարձակել այդ զրքի ուսումնասիրութիւնը: Այսպէս շատ առիթներ են հանդիպում. կամ մինչև անգամ պէտք է փնտռել այդպիսի առիթներ. որ Հոմերի հետ կապակցութիւններով մենք միտից լուսաբանութիւն ստանայ: Հաւանցի յեշտականք մի բանի այդպիսի բնաբաններ. «Իս տիս Հոմերոսի զեղարժանող աւելի մեզ ևս լուսաւորում է». Հոմերոսը «միամիտ» և «կերպարանիչ» վիպասանող է (Հիւլէո). Սոփոկլեսի և Հոմերոսի հիման վերայ ցոյց առ վիպական և բանագործութեան տարբեր միտքիւր. իսկ Դիոքլիս ինչպիսի է որդւում վիպասանութեան և բանագործութեան զանազանութիւնը. հետագոնի Շիլլերի խառն. թէ հոմերոսն վիպասանութիւնը բերացիկ հանգամանակների հանդարտ ստացութիւն է. ինչով է զանազանում իրազեկի վիպագործութիւնը հոմերականից. հոմերոսն պատկերում իսկական կրքանկը. բացառել իւր հերոսների ճոխախոսութեանց օրինակով. ինչով

ե. զամազանվում Գեորգի Հերման և Դորոթեան Հոմերի պիսակամից. Ասիլիսի վահանն ու Շիրերի Ձանգակի եզրը. համբերեան արձագանգներ Շիրերի քանադոնքութեան. Վիրգիլիոսի Տրոյացայի կործանումը «անուամբանալ դիրագորովորյուն ե» (Գեթե) :

Քերսիաթի օրինակով կարելի է ցոյց տալ, թէ Հոմերի մէջ ամբողջապէս արմատացած մի յիշք՝ ինչպէս ճիշդաւորում է զանազան կողմերում. Քերսիսիս - դրուագից հին, ե կըրակացնում էնպէր իւր Լաոկոոնի գիսաւոր խնդիրը լուսաբանելու, թէ ինչ սահմանով է բաժանած քանաստեղծութիւնը նկարչութիւնից, ինչով է զանազանվում Հերդերի կարծիքը հոմերական Քերսիսի մասին Լեսսինգի կարծիքից. Քերսիսը ծիծաղի է ինքն ինքն, թէ ծիծաղելի է դառնում Ողիսիոսի խայտառակելովը և իւր վարմունքովն այդպիսի անարդարութիւնից յետոյ (ազգեղ Հելլենոստի վերայ չեն ծիծաղում, երբ որ նա խոհականութեամբ է խօսում). Հոմերոսի Քերսիսի համամասնութիւնն Եհսպիտի իրար կերպի հետ։—

Դառնանք կրկին ծանրաբեռնութեան խնդրին Բիսյն Հոմերոսի բազմաթիւ բնաբանների անսպասութիւնից այս քանի մի յիշատակածները մեզ պէտք է հասկացնէին, թէ գերմանացի աշակերտները արդարեւ այնքան շատ բան են ուսանում, որ մեր ուսումնարանների համար երազել անգամ կարելի չէ։ Բայց այնքանի վերայ աւելացրեցէք նաեւ միւս հեղինակութիւնները յունաց, լատինացւոց, նոր ազգերի և մայրենի գրականութիւնից, և բնաբանների ծովը ովհէան կը դառնայ։ Իրաւ է, այս բոլորը ամենայն աշակերտ չպէտք է գրէ, այլ բնաբանների մի խումբ բաժանվում է աշակերտների մէջ, իւրաքանչիւրին զատ աշխատանք տալով, բայց սերբազրութեան ժամանակ ամէնքն էլ գործի մէջ մասնակցում են, որ ապացոյց է, թէ ամէնքն էլ արդէն պատրաստ են՝ ամէն մի բնաբանի համեմատ՝ շարագրութիւն գրելու, և թէ ուրեմն ամէնքն էլ լաւ ուսումնասիրել են Հոմերոսի վերապատմութիւնները, մասամբ յունարենի դասերում, մասամբ շարագրութեան դասերում։ Իսկ մի գիւրջ այնպէս ուսումնասիրել կարողանալը՝ ոչ ապագէն մի այնպիսի հարստութիւն է աշակերտի ձեռքում, որ մեզ համար անհասանելի բան է թուում. նա սովորում է զիւր կարգաւորութեամբ, որ մեր ուսումնարաններում բոլորովին անյայտ բան է։ Որ դասարանից որ այնպիսի աշակերտը դուրս գայ՝ հետք տանում է ինքնակրթութեան շնորհի, որից որ դուրի է հայց աշակերտը. իսկ եթէ համալսարան մտնի, ինքնուրոյն կերպով աշխատող ուսանող է դառնում, և ճշգրտում է շուտ վերջացնել իւր ուսանողութիւնը, որպէս զի, բանի որ երկատարակաւ ոյժ ունի, շտապէ մասնորոպէս զինուած մանկէ կեանքի

մէջ—ձեռներեց կամքով և նախաձեռնող հոգւով։

Արդ եթէ գերմանական ուսումնարանը գեռ միայն մի ուսմունքի համար այսքան լուրջ աշխատեցնում է իւր աշակերտին, և այնուամենայնիւ նորա ուղեղի յոգնութիւնը մերժելով մերժում է, հապա ինչ յոգնութիւն պէտք է զգայ մեր աշակերտը, որ Խորենացուց ընդ ամէնը երկու և կէս բնաբան է քաղում իւր շարագրութիւնների համար, իսկ Պուշկինի, Դիւլէրի կամ Էքսպիլի անունը՝ ուսուց լեզուի դասերից դուրս էլ չի լսում։ Հապա ուրեմն մենք իրաւունք ունէինք ասելու, թէ մեր ուսումնարաններում ծայրայեղութեան և չափազանցութեան միւս կողմն է իշխում, թէ մեր ցաւը ուղեղի անգործութիւնն է և պարագրութիւնը։ Իսկ այս բանի դարմանն այն կը լինի, եթէ մեր ուսուցիչները ոչ միայն ձայն տան մանկավարժական ժողովներում և ձայներ գումարեն վճիռներ կայացնելու համար, այլ և վոքը ինչ յարգեն մանկավարժութեան արուեստը, որպէս զի իրանց Քիչ աւանդելիքը Դատ տարիներով ձգձգելու ախար թողնեն և գումարուած տարիքների համեմատ մտաւոր սնունդ մատակարարելու վարժուին։

Ս. Մ.



ՆՈՐ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Դեռ սրանից շատ առաջ Սենեկան գանգատում էր, որ մենք ոչ թէ կեանքի, այլ գարոցի համար ենք ուսանում. Սենեկայից մինչև այժմ դարի են անցել, մանկավարժութիւնը ահագին յառաջագիմութիւն է արել, այնու ամենայնիւ նոյն իսկ այժմ, եթէ մէկը լաւ ուսումնասիրէ մեր գարոցական ամբողջ գործը և ուսումնարանական բոլոր հաստատութեանց ծրագրերը՝ Սենեկայի հետ միասին կգոչէ ցաւը սրտի, որ մենք ուսանում ենք ոչ թէ կեանքի, այլ գարոցի համար։

Մինչև այժմ լոյս տեսած այն բոլոր գրքերի և յօդուածների վերայ՝ որոնք պատարակում են գարոցական կրթութեան արդի դրութիւնը, աւելացաւ մի նոր գիրք ևս, որ վերջին գիտումն է ամբողջ գարոցական գործը յեղաշրջել։

Դեմուլէնի այս գիրքը լոյս է տեսել Փարիզում և կրում է նոր կրթութիւն (Education nouvelle) անունը. Այս գիրքը գեռ լոյս տեսած յառաջ բերեց մի մեծ բանակիւ, որ ըստ ինքեան նշանակելի երևոյթ է. La science sociale անուա-